եւ յայլ տեղի մերձ սահմանին այն ի հիմանց զեղեցիկ քան զառաջինն շինեցաւ յայսմ ամի հրամանաւ Ղըպլէլոյ, որ նստաւ յայսմ ամի ի Սեբաստիայ՝ փեսայն վէզիրի։ Որ և ետ հրաման վանիցն Թոխաթու և շինեցին և զխոստացեալ գրամն նմա ոչ տային, վասն որոյ առաքէ արս, զի ի հիմանց քակէին։ Նա և գայր առաջնորդն Յովհաննէս աւագիրիցովք իւրեանց առ ի ժողով յեկեղեցիս մեր։ Եւ ելեալ Ակընցիք նամակաւ մեծաւ Մարտիրոս վարդապետին և յոյժ աւետեօք թղթին շրջէին յեկեղեցիս։ Յայնժամ յանկարծակի եկն բօթ[1]) տրտմագոյն և լուր դառնագոյն՝ թէ զշինեալն և զհաստատեալն վերստին ի հիմանց տապալեցին։ Ոմանք այսպէս ասացին, թէ հակառակեալ ռէյիզին թէ Զեռօք իմովք ոչ հոգացիք, վասն որոյ և արդ արար վէզիրի. և ոմանք ասացին՝ եթէ չարաբարէր ոմանք առ նախանձու միմեանց չարախօսեն զոմն տաճիկ առ վէզիր թէ Զօրպայ է, և սպասէին մահուան, և թէ որքան նա աղաչէր զՀայք, առաւել նոքա զայրանային ի վերայ տաճկին ի նեղութեան նորա, վասն որոյ և նայ ռէյիզին էանց զայն թէ Ի յայլ տեղի ի հիմանց նոր եկեղեցի կանգնեցին Հայք. վասն որոյ և լինէր բազում աղբերք արտասուաց ի գաւառն Ական, յոքնակի ողբերգողք ծերոց կականս բառնային եթէ Փտաք զանգին գոհարն և շուտ կորուսաք. որ և ի շատ աղէկտուր պատահելեացն բազումք ի ծերոցն մեռան. մեռաւ և ատ աւագերէցն նոցին, զոր ի վերոյ յիշեցաք, յետ տօնի Վերացման Սուրբ Խաչին։

Եւ ի գալն իւրում վէզիրն ետ զօլօֆէն ամենայն ծառայից՝ մեծամեծաց մինչ ցտրպագոյնս յետինս օր ըստ օրէ։ Եւ տայր վարդապետն զընծայս քէհեայի

1) բօդ.